

ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻՆ.

Մեր նախնեաց աւանդների համաձայն մշտապէս հաղորդակից լինելով պրաւօսլաւ եկեղեցուն և Մեզ համար այնտեղ գտնելով խընդութիւն և հոգեկան ոյժերի նորոգումն, Մենք սրտանց միշտ ձգտում էինք ապահովել Մեր հպատակներից իւրաքանչիւրի հաւատոյ և աղօթքի ազատութիւնը նրա խղճի թելադրութեան համեմատ: Հոգալով իրականացնել այդ մտադրութիւնները, Մենք դեկտեմբերի 12-ի հրամանի մէջ մատնանշած բարեփոխութեանց շարքում մտցրինք նաև, որ իրական միջոցների ձեռնարկուի՝ վերացնելու կրօնական շրջանակում եղած սահմանափակումները:

Այժմ քննելով նախարարների ժողովում այդ առթիւ կազմած կանոնները և գտնելով այն համապատասխան Մեր՝ Ռուսաց կայսրութեան մէջ կրօնական համբերատարութեան սկզբունքներ հաստատելու նուիրական ցանկութեան, Մենք օգտակար վարկանք հաստատել այդ կանոնները:

Հրաւիրելով Ամենաբարձրեալի օրհնութիւնը այդ՝ խաղաղութեան և սիրոյ գործի վրայ և յուսալով, որ նա կը ծառայի պրաւօսլաւ հաւատի առաւել բարգաւաճման, որ բղխում է Աստուածային շնորհի ուսմամբ, խոնարհութեամբ և բարի օրինակներով, Մենք Մեր այդ վճռի համաձայն հրամայում ենք.—

1) Ընդունել, որ ռուսադաւանութիւնից քրիստոնէական ուրիշ դաւանութեան կամ վարդապետութեան անցնելը ենթակայ չէ հալածանքի և չի կարող անհատի անձնական կամ քաղաքացիական իրաւունքներին վնասակար հետևանք ունենալ և ռուսադաւանութիւնից հեռացած չափահաս անձնաւորութիւնը հաշուում է այն դաւանութեան, որը նա ընտրել է:

2) Ընդունել, որ միևնոյն դաւանութեան պատկանող ամուսիններից մինի այլ դաւանութեան անցնելու դէպքում բոլոր անչափահաս զաւակները մնում են նախկին հաւատոյ մէջ, իսկ եթէ երկու ամուսիններն էլ կրօնափոխ լինին, նրանց զաւակները մինչև 14 տարեկան հասակը հետևում են ծնողական դաւանութեան, իսկ այդ տարիքի հասնելուց յետոյ մնում են նախկին դաւանութեան:

3) Որպէս յիշեալ կանոնների լրացուցիչ մի մաս (1 և 2-դ կէտերի), սահմանել, որ պրաւօսլաւ համարուած անձինք, որոնք իսկապէս դաւանում են այն ոչ քրիստոնէական հաւատը, որին պատկանում էին իրենք, կամ

իրենց նախնիքը նախ քան ռուսաղաւան դառնալը, եթէ ցանկանան, կարող են հանուիլ ռուսաղաւանների թուից։

4) Թոյլ տալ քրիստոնէական բոլոր դաւանութեանց պատկանողներին, որ իրենց որդեգրած, բայց գտած դեռ չըմկրտուած երեխաներին, որոնց ծնողներն յայտնի չեն, մկրտեն իրեն հաւատոյ ծէսերի համեմատ։

5) Օրէնքի մէջ տարբերել այն վարդապետիւնները, որոնք այժմ կոչւում են «հերձուած», բաժանելով այն երեք խմբերի. ա) հնաձէաների խմբակցութիւններ. բ) աղանդաւորութիւն և գ) առտառոց ուսման հետևողներ, որոնց պատկանիլը պատժւում է քրէական կարգով։

6) Հանաչել, որ օրէնքի որոշումները, որոնք իրաւունք են տալիս հասարակական աղօթքներ և որոշում աղանդի դիրքը քաղաքացիական տեսակէտից, վերաբերում են ինչպէս հնաձէաների միութեանց, այնպէս էլ զանազան աղանդաւորութեան. իսկ կրօնական պատճառներով օրէնքների խախտումն յանցաւորներին ենթարկում է օրէնքով որոշուած պատասխանատուութեան։

7) Ներկայումս գործածուող «հերձուածող» բառի փոխարէն հնաձէս անուանել այն բոլոր միութեանց և ճիւղերի հետևողներին, որոնք ընդունում են պրաւօսլաւ եկեղեցու դոգմաները, միայն չեն ընդունում նրա մի քանի

ծէսերը և իրենց աստուածպաշտութիւնը կատարում են հին տպած գրքերի համեմատ։

8) Գիտենալ, որ հնածէսների և ազանդաւորների աղօթատների շինութիւնը, ինչպէս և նրանց նորոգութեան թոյլտուութիւնը պէտք է տեղի ունենան այն որոշումների համաձայն, որոնք գոյութիւն ունին կամ կըսահմանուին այլափառ եկեղեցիների համար։

9) Թոյլ տալ հնածէս համայնքների կողմից ընտրուած հոգևորականներին կրօնական կարգեր կատարելու համար կոչուելուաւագերէց և ուսուցիչ», և այդ անձինք կառավարութեան կողմից պաշտօնի մէջ հաստատուելուց յետոյ, պէտք է հանուին գիւղական կամ մեշչանների դասակարգից, որին նրանք պատկանում էին և ազատ պէտք է լինին ներգործական բանակի մէջ զինուորական ծառայութիւնից մի և նոյն քաղաքական իշխանութեան թոյլտուութեամբ և այն անուամբ, որը նրանք ընդունել են հոգևորականութեան մէջ մտնելիս՝ հաւասարապէս թոյլ տալով, որ նրանց տրուած անցագիրներում պարապմունք ցոյց տուող հարցի դիմաց նշանակուի հոգևորականութեան մէջ նրանց ունեցած դիրքը՝ առանց պրաւօսլաւ հոգևորականութեան յատկացրած անունները գործ դնելու։

10) Թոյլ տալ նոյն հոգևորականներին ազատօրէն կատարելու իրենց հոգևոր պաշտամունքը՝ ինչպէս մասնաւոր տներում, և աղօթատներում, այնպէս էլ բոլոր կարևոր դէպ-

քերում՝ արգելելով եկեղեցական զգեստների գործածութիւնը՝ երբ այդ օրէնքով խոտելի կլինի։ Ուսուցիչներին և դաստիարակներին (5 9) կտակներ վկայելու գործում տալ այն բոլոր իրաւունքները՝ որոնցով օգտւում են առհասարակ բոլոր հոգևորականները։

11) Ընածէսներին և աղանդաւորներին պրաւօսլաւների հետ ամուսնանալիս տալ այն բոլոր իրաւունքները՝ որոնք տրւում են այլադաւաններին։

12) Բանալ այն բոլոր կնքուած աղօթատները՝ որոնք փակուած են թէ վարչական եղանակաւ՝ նախարարների միջոցաւ Բարձրագոյն բարեհայեցողութեան առաջարկուելով և թէ դատարանական հիմնարկութեանց որոշմամբ՝ բացի այն աղօթատներից՝ որոնք փակուած են շինարարական օրէնքներ չլրկատարելու պատճառով։

13) Սահմանել որպէս ընդհանուր կանոն՝ որ քրիստոնէական բոլոր դաւանութեանց եկեղեցիների և աղօթատների կառուցումը վերաշինութիւնը և նորոգութիւնը թոյլատրելու համար հարկաւոր է. ա) համապատասխան հոգևոր իշխանութեան համաձայնութիւնը. բ) հարկաւոր դրամական միջոցներ ունենալը գ) շինարարական օրինաց տեխնիքական պահանջների պահպանութիւնը։ Բացառութիւններ այս ընդհանուր կանոնից՝ եթէ նրանք մասնակի տեղերի համար կարևոր կըհամարուին՝ կարող են սահմանուիլ մի միայն օրէնսդրական կարգաւ։

14) Ընդունել, որ ամեն տեսակ դպրոցներում՝ այլազգեան կրօնագիտութիւն աւանդելու դէպքում այդ դասաւանդութիւնը պէտք է կատարուի ուսանողների մայրենի լեզուով և կրօնի դասաւանդութիւնը պէտք է յանձնուի համապատասխան դաւանութեան հոգևորականներին, և մի միայն նրանց բացակայութեան դէպքում՝ նոյն դաւանութեան պատկանող աշխարհական ուսուցիչներին։

15) Վերաքննելի ճանաչել մահմէդականների կրօնական կեանքի նշանաւոր մասերին վերաբերեալ օրէնսդրութիւնը։

16) Վերաքննել լամայիտների մասին գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնը, խոտելի համարելով պաշտօնական գրութեանց մէջ նրանց «կռապաշտ» և «հեթանոս» կոչելը։

17) Ռացի վերոյիշեալներից՝ գործադրել նաև Մեր՝ սոյն թուին հաստատած նախարարական կոմիտէի որոշումները անցեալ տարուայ դեկտեմբերի 12-ի ուկազի վեցերորդ կէտի գործադրութեան եղանակի մասին։

Յանձնում ենք կառավարիչ Սենատին վերոյիշեալների կատարման համար հարկաւոր կարգադրութիւններ անել։

Իսկականի վերայ ՝Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրած է ՆԻԿՈԼԱՅ։

Ցարսկոէ Սելո
17-ին ապրիլի 1905 թուին։